



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարան
Վարչական գործ N 0181/05/2010թ.
Նախագահող դատավոր՝ Ա. Թադևոսյան
Դատավորներ՝ Կ. Մարդանյան
Մ. Ավանեսյան

վարչական գործ N 0181/05//2010թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով՝ կազմով.

Նախագահությամբ՝ դատավոր՝ Կ. Ղարայանի
դատավորներ՝ Շ. Օհանյանի
Զ. Օհանյանի

2011 թ. ապրիլի 12-ին

ք. Ստեփանակերտ

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործով ըստ հայցի Էդվարդ Հակոբի Իսրայելյանի ընդդեմ ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), Շուշիի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), Արկաղյա Միքայելի Հովհաննիսյանի՝ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը և աճուրդն իր իրավական բոլոր հետևանքներով անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2011թ. փետրվարի 7-ի վճռի դեմ հայցվոր Էդվարդ Իսրայելյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը,

Դիմելով դատարան հայցվոր Էդվարդ Իսրայելյանը պահանջել է Շուշիի քաղաքային համայնքի ավագանու 11.06.2008թ. N7 մասնավորեցման ներկայացնելու որոշումը և Նախարարության կողմից անցկացված 16.09.2008թ. աճուրդն իր իրավական բոլոր հետևանքներով մասնակիորեն անվավեր ճանաչել:

ԼՂՀ Վարչական դատարանը 05.10.2010թ. վճռով հայցը մերժել է:

ԼՂՀ Գերագույն դատարանը 26.11.2010թ. որոշմամբ Վարչական դատարանի 05.10.2010թ. վճիռը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ վարչական դատարանը 07.02.2011թ. վճռով հայցը մերժել է:
Նշված վճռի դեմ հայցվոր Էդվարդ Իսրայելյանը բերել է վճռաբեկ բողոք:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի բերվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վարչական դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի պահանջը, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ, 122-րդ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածների պահանջները, ճիշտ գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին, որոնց խախտման արդյունքում իր համար առաջացել են ծանր հետևանքներ:

Բողոք բերող անձն իր պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վարչական դատարանը ճիշտ գնահատական չի տվել գործում գտնվող ապացույցներին, խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի պահանջներն այն մասին, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գործը չի քննել Գերագույն դատարանի 26.11.2010թ. որոշմամբ նշված ծավալով, այլ իր նախաձեռնությամբ առաջ է քաշել իրավական խնդրի քննություն, որը կապ չունի իր հայցի հիմքում դրված փաստարկի հետ: Նշված պատճառով գործի քննության ծավալից դուրս են մնացել ԼՂՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ և հանրագրեր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իր իրավունքը, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ԼՂՀ օրենքի 8-12-րդ հոդվածները, «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի 32-րդ, «Պետական գույքի մասնավորեցման մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության հարցի քննությունը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինը, որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը, կրում է իր որոշման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Չնայած Քաղաքապետարանի ներկայացուցիչն ընդունել է իր երկու դիմումներն անհետևանք թողնելու մասին փաստը, սակայն Քաղաքապետարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածների առաջին մասերով սահմանված պահանջները, որպես պատասխանող կողմ պարտավոր էր դատարան ներկայացնել հայցադիմումի պատասխան, որը չի ներկայացրել, իսկ դատարան պատասխան չներկայացնելը դատարանը պետք է գնահատեր որպես հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

Ըստ բողոքաբերի՝ Գերագույն դատարանի որոշմամբ Վարչական դատարանը պետք է վերացներ Շուշիի քաղաքային համայնքի որոշման, ԼՂՀ Կառավարության 14.08.2008թ. որոշմամբ հաստատված աճուրդով մասնավորեցված օբյեկտների ցանկում և ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության հայտարարության մեջ նշված մասնավորեցման ենթակա տարածքների վերաբերյալ հակասությունները, պարզեր նաև, արդյոք նույնաչափ երկու տարածքների աճուրդում իր զբաղեցրած տարածքի նկատմամբ է պատասխանողը հաղթող ճանաչվել, որոնք չի կատարել:

Բողոքաբերը գտնում է, որ Վարչական դատարանի կողմից դատավարական և նյութական իրավունքների խախտման արդյունքում, իր համար առաջացել են ծանր հետևանքներ, քանի որ ինքը զրկվել է 1992թ. իր կողմից դեռևս ՊՊԿ Շուշիի ներկայացուցչի

թույլտվությամբ, անընդմեջ օգտագործվող 39,57 քառակուսի մետր տարածքի նկատմամբ իր իրավունքներն օրինականացնելու հնարավորությունից:

Բողոքաբերը պահանջում է ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վարչական դատարանի 07.02.2011թ. N 0181/05/2010թ. վարչական գործով կայացրած վճիռը և գործը վերադարձնել նույն դատարան՝ լրիվ ծավալով քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շուշիի տարածքային ստորաբաժանումում 26.07.2007թ. գրանցվել է Շուշիի համայնքի սեփականության իրավունքը Շուշի քաղաքի Ամի(ր)յան N 1 շենքի նկուղային հարկի՝ հասարակական օբյեկտի նկատմամբ:

2. Էդվարդ Իսրայելյանը 08.09.2007թ. դիմել է Շուշիի քաղաքապետին վիճելի տարածքն իրեն հատկացնելու, իսկ 10.09.2007թ.՝ վարձակալության տրամադրելու խնդրանքով:

3. Շուշիի քաղաքային համայնքի ավագանու 2008թ. հունիսի 11-ի N 7 որոշումը՝ Ամիյան փողոցի N1 շենքի նկուղային հարկի հինգ տարածքները՝ Նախարարությանը մասնավորեցման ներկայացնելու մասին:

4. Շուշի քաղաքի Ամիյան փողոցի N 1 շենքի նկուղային հարկի երկու նկուղներից, յուրաքանչյուրը՝ 35,97 քառակուսի մետր տարածքով 251.790 ՀՀ դրամ մեկնարկային գնով, 16.11.2008թ. անցկացված աճուրդում, ըստ 14102-13 արձանագրության մեկ նկուղային տարածքի նկատմամբ հաղթող է ճանաչվել Արկադյա Հովհաննիսյանը:

5. Սույն վարչական գործով Գերագույն դատարանի 26.10.2010թ. որոշումը՝ գործը նոր քննության ուղարկելու մասին:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ և հանրագրեր ներկայացնելու ու ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք, իսկ 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը, իսկ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից վկայակոչած փաստերի ընդունում:

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Գերագույն դատարանը 26.11.2010թ. որոշմամբ բեկանելով սույն գործով Վարչական դատարանի 05.10.2010թ. վճիռը, գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է Գերագույն դատարանի որոշման հիման վրա՝ Գերագույն դատարանի սահմանած ծավալով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վարչական դատարանը խախտել է վերոշարադրյալ նորմերի պահանջները, չի անդրադարձել Է. Իսրայելյանի հայցի հիմքում դրված փաստարկին և Գերագույն դատարանի որոշմամբ սահմանված նոր որոշման ծավալին, որ նշված նկուղային տարածքն Է.Իսրայելյանին հատկացնելու առաջարկով 2007 թվականին նա երկու գրավոր դիմում է ուղարկել Շուշիի քաղաքապետին, որը «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան չի ընթացքավորել, որով խախտվել է ԼՂՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ և հանրագրեր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու նրա իրավունքը, չի պարզել և չի գնահատել հայցադիմումին պատասխան չներկայացնելու պատասխանողի պարտականության չկատարելը և դիրքորոշումը, չի բաշխել ապացուցման բեռի կրման պարտականությունը՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացուցման բեռը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որպես հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Ընդ որում, Վարչական դատարանը չի անդրադարձել վիճարկելի տարածքի աճուրդն օրենքով նախատեսված կարգի համապատասխանության հարցին, ինչպես նաև այն հարցին, թե նույն շենքի երկու նկուղներից հենց Է. Իսրայելյանի զբաղեցրած տարածքի նկատմամբ է Ա. Հովհաննիսյանը հաղթող ճանաչվել:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը սույն գործի նոր քննությունը սահմանված ծավալով չի իրականացրել, իսկ իր նախաձեռնությամբ առաջ քաշած իրավական խնդիրը չի բխում հայցապահանջից և Գերագույն դատարանի նշված որոշմամբ սահմանված ծավալից, ուստի բողոքի հիմքերի առկայությունը դիտում է բավարար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Էդվարդ Իսրայելյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Վարչական դատարանի 2011թ.փետրվարի 7-ի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից,վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Կ. ՂԱՐԱՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Շ. ՕՉԱՆՅԱՆ

Զ. ՕՉԱՆՅԱՆ